ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Տ. ԱՐԿՕՄԷԴԻ

II

Մարտ'ի սնցեալ 1898-ի 9-րդ համարում առիթ ունեցանք հանգամանօրէն Թիֆլիսի ձիաքարշի խնդրի մասին խօսելու։ Ինկարի առնելով քաղաքի շահաւէտութեան տեսակէտը և թէ այն, որ այդ խնդրի առիթով քաղաքային ինքնավարութեան գործիչներից շարերի հայեացքները, մտածողութեան եղանակը, կարելի է ասել նոյն իսկ ուղղութիւնը արտայայտուեց, պարզուեց որոշակի կերպով սրա կամ նրա տրամադրութիւնը, ոգին դէպի անհատական (կոնցէսիոնական) և հասարակական (քաղաքային) ինդիսիատիւը, այդ պատճառով հասկանալի է թէ ինչու նորա վերաբերեալ հանգամանքները առանձին կարևորութիւն և հետաքրքրութիւն են ներկայացնում ներկայումս։ Այդ կարևորութիւնն է դրդում մեզ ծանօթացնելու ընթերցողին համառօտ կերպով վերջին հանգամանքների հետ։

Մեր անցեալ լօգուածում պարզուեց, որ քաղաքային վարչութիւնը [1]) սկզբից հէնց կողմնակից էր ձիաքարշը կոնցեսիա տալուն և այդ արդէն վերջնականապէս ապացուցեց հետեւեալ հանգամանքում։ Մինչդեռ Դումման սեպտեմբերի 28-ին ձայների մեծամասնութեամբ վճռեց ընդունել բանակցութիւնները բոլոր կոնցեսիոնէրների հետ և նշանակած ժամանակին ձիաքարշը լեր գնել, այնուամենայնիւ պ. քաղաքագլուխը բայեհաճում է առանձնապէս հրաւիրել Անտիմ ընկերութեան դիրեկտոր Բօրիին, ընդունում սրա վերջին առաջարկութեան պայմանները և իրեն հետ ունենալով վարչութեան երկու անդամներին—Իւանէնկոյին և Խոսրոէվին, գալիս է հոկտեմբերի 14-ի Դումայի նիստում Բօրիի դարը պաշտպանելու։ Անմոռանալի է Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան կեանքի մէջ հոկտեմբերի 14-ի երեկոն։ Պր. Նահանգապետը առաջարկել էր Դումային քննել արդեօք քաղաքային տնտեսութեան ձեռով ձիաքարշի շահագործելը

---

[1]) Նորա մեծամասնութիւնը—քաղաքագլուխը և երկու անդամները։

աւելի ձեռնտու կը լինէր քաղաքին թէ Բօքիի նոր առաջարկութիւնը։ Վարչութեան երկու անդամները պ. Վերմիշէվ և իշխ. Արղուտինսկին խիստ հակառոքիստական ճառեր արտասանեցին. ժողովուրդը, որ խռնուած էր վերնայարկում և խորհրդարանի նախասենեակում արտայայտում էր այս կամ այն ճառախօսին իր զգացմունքները բուռն ծափահարութիւններով, չնայելով որ քաղաքագլուխը առաջարկում էր հասարակութեան դադարեցնել ցոյցերը։ Դումայի իրաւասուներից Բօքիի նոր առաջարկութեան հակառակ արտայայտուեցին—Շէստակով, Բարով, Եւանգուլով, իշխ. Արղուտինսկի, Խուդադով, Ալիխանով և այլք։

Ձայնաւոր խուդադով ուղղեց պ. քաղաքագլխին այս խիստ խօսքերը.

«Պր. քաղաքագլուխը իր կարծիքի մէջ անուանում է մեծամասնու-
« թեան կարծիքը եթերական, ցնորամիտ, բայց ոչ մի ապացոյց չէ բե-
« րում. ես, վերջապէս չեմ հասկանում, ինչու համար Դուք, պ. քաղաքա-
« գլուխ, չկամեցաք հպատակել Դումայի որոշման և հրաւիրելով պ. Բօ-
« բիին, բանակցութիւններ սկսեցիք նրա հետ։ Ես այդպիսի վարմունքով
« գոհում եմ ոտնակոխ արուած Դումայի բարոյական արժանաւորութիւնը»։

Իսկ պ. Ալիխանովը, որի անձնաւորութիւնը անցեալ անգամ բնորոշեցինք, այս անգամ վերջին ճիգը թափեց օտար կոնցեսիաների մուտքը արգելել տալու և ելքն էլ ցոյց տալու։ Նա իր ճառը աւարտեց այսպէս.

«Ինչ վերաբերում է դատարանական պրոցէսներով մեզ ուղղած սպառ-
« նալիքներին (Անոն. ընկ. կողմից), դիմաւորելու համար այդ պրոցէս-
« ներին էլ որն է աւելի լարմար բոպէն, եթէ ոչ այժմ, երբ մեր քաղա-
« քային ինքնավարութեան գլուխ կանգնած ենք տեսնում, մի փորձուած
« հմուտ իրաւաբան-պրակտիկ, որը հենց այս վերջերս թողեց երդուեալ
« հատարմատարի պրակտիկան։ Սա ամենալարմար բոպէն է պրոցէսնե-
« րի համար։ Հերիք է, վերջապէս, ինչքան որ նրանք մեզ դէպի դուռը
« ցոյց տուեցին։ Ցոյց տուեցէք այժմ և դուռ նրանց միանգամ, և շատ պինդ
« փակեցէք նրանց առաջ ոչ թէ միայն դռները այլ և պատուհանները»։

(Բուռն ծափահարութիւններ)։ Այստեղ խօսում է տեղական բուրժուազիայի ոգին և չանձին Ալիխանովի նա արտայայտում է որոշակի, և ուղիղ կերպով սկսել է ըմբռնել իր դարը պաշտպանելու եղանակը։ Բայց, ճիաքարշի խնդրի մէջ, որքան մենք դիտեցինք, դումայի միւս բուրժուայ ձայնաւորները—Օպոչինին, Ցովհաննիսեան, Միրկեիչ [1]) և այլք այլ դիրք բռնեցին. նրանք բուրժուազական լիբերալիզմով իբր կողմնակից արտայայտուեցին ճիաքարշը ընդհանրապէս կոնցէսիայով տալու սկզբունքին.

---

[1]) Իրաւասու Միրկեիչ, որ երիտասարդ է և լուրջ է խօսում, ընդհանրապէս հանդիսանում է ճիշտ և հաւատարիմ արտայայտիչը բուրժուազական հայեացքների հասարակական խնդիրներում։ Մասնագիտութեամբ, ինչպէս մեզ ասացին, իրաւաբան է։

իսկ ով որ լինէր այդ կոնցեսիոնները, միայն թէ քաղաքին փոքր ի շատէ օգուտ տար և գործը չընկնէր տեղական ոյժերի, քաղաքի «տաքգլուխ», շատ խոստացող և քիչ անող (նրանց կարծիքով) վարիչների ձեռքը, ահա նրանց իսկական տրամադրութիւնը։ Եւ վերոյիշեալ իրաւասուները հոկտ. 14-ի երեկոյեան իրանց ճառերով փաստաբանեցին Ռօբիի դարը, մանաւանդ Օպոչինին, որը փայլեց իր «տափակ», երկարաձիգ ճառով։

Չնայելով այդ իրաւասուների և վարչութեան մեծամասնութեան ջանքերին, դուման 49 ձայնով ընդդէմ 10-ի վճռեց. «Դատելով, որ ձիաքարշը քաղաքային տնտեսութեան ձևով շահագործելը աւելի ձեռնտու է քան Անոնիմ ընկերութեան վերջին առաջարկութիւնը, նորէն հաստատել իր սեպտեմբերի 28-ի որոշումը կոնցեսիոնների հետ բանակցութիւնները դադարեցնելու և նշանակած ժամանակին ձիաքարշը լեռ գնելու մասին։

Սակայն քաղաքն իր ձեռքն առնելու համար ձիաքարշը, պէտք է հոկտ. 25-ին լեռ գնէր, այսինքն ինքը շահագործելով ձիաքարշը տարէց տարի 115.000 ռ. վճար պէտք է ներկայացներ Անոնիմ ընկերութեան մինչև կոնցեսիայի պայմանաժամի լրանալը 1929 թուին 30 տարի շարունակ և քաղաքը պէտք էր զգում 200.000 ռ. մի դումարի փոխարինութեան դիմելու։ Դորա համար նրան հարկաւոր էր կառավարութեան թոյլտուութիւնը ստանալ։ Սակայն կառավարչապետը չբարեհաճեց փոխառութեան թոյլտուութիւնը տալ քաղաքին հետևեալ հիմունքների վրայ։ Առաջին՝ քաղաքային դուման լոյս ունենալով թէ ձիաքարշի արդիւնքով կարող կը լինի տարէցտարի թէ 115.000 ռ. գումարը վճարել Անոնիմ ընկերութեան, թէ փոխառած 200.000 ռ. հանգցնել և թէ նրա տոկոսիքը վճարել, պ. Կառավարչապետը համարում է ենթադրական, պրոբլէմատիկական մի բան, թուերով և փաստերով չհաստատուած. նամանաւանդ, որ նոյն քաղաքային դուման իր անցեալ թուի յունիսի 22-ի նիստում որոշումն է կայացնում իր դուրս բերած հաշիւների հիման վրայ, որ 92-ից 96 թիւը հինգ տարիներում միջին հաշուով ձիաքարշի զուտ մուտքն է տարեկան ոչ աւելի քան 80.510 ռ., որը նշանակում է թէ բաւականութիւն չէ կարող տալ գնելու և փոխառութեան վճարների համար։ Միւս կողմից ձիաքարշի քաղաքային տնտեսութեամբ շահագործման ծրագրում հաշի առնուած չէ ճշտութեամբ, թէ որքան կը լինի սկզբնական ծախքը ձեռնարկութիւնը ընդունելուց առաջ և թէ լեռուչ, չեն պարզուած նոյն իսկ մօտաւորապէս թէ որքան ծախք կը պահանջէ ձիաքարշի շահագործումը, ադմինիստրացիան. ինչ անակնկալ ծախքեր կարող են լինել և այլն։ Ընդհանրապէս ձիաքարշը գնելու ծրագրի մշակումն այնքան թերի եւ անհիմն է կատարուած, որ նրանից դուրս բերուած եզրակացութիւնները եւ հետեւանքները նոյն իսկ իրան վարչութեան կողմից վստահութեան չեն արժանացել, որ իր հոկտեմբերի 13-ի որոշումով դտնում է անոնիմ ընկերութեան հետ համաձայնելը աւելի գերադասելի քան թէ

ձիաքարշի քաղաքային տնտեսութեամբ շահագործումը [1]։ Երկրորդ՝ քաղաքը պարտք ունի 1.094.359 և 97 կ., 800.000 ռուբլու փոխառութիւն պէտք է անել մշտական սպանդանոցի (скотобойня) և քաղաքային Լոմբարդի հիմնական կապիտալը մեծացնելու համար։ բացի դրանից քաղաքի վրայ մինչև 1870 թիւը՝ քաղաքային ինքնավարութեան մոցնելը արքունական պարտք կայ մնացած մինչ 141.759 ռ. 19 կ. այս և վերոյիշեալ հիմունքներով պ. Կառավարչապետը գտնում է քաղաքային դիմումը ձիաքարշը քաղաքային տնտեսութեամբ շահագործելու վերաբերմամբ անթոյլատրելի։

Այսպէս ուրեմն փոխառութեան այս եղքը լուծեց ձիաքարշի խնդիրը։ Քաղաքը չէր կարող փոխառութիւն անել, չէր կարող և գնել և իր ձեռքն առնել ձիաքարշը։ Բոբին չաղթանակեց, մնում էր նոր պայմանագիր կապել նրա հետ գոնէ աւելի ձեռնտու պայմաններով։

Քաղաքագլխի, երկու անդամների և իրաւասուներից մի քանիսի ցանկութիւնը կատարուեց։

Դուման Հոկտեմբերի 22-ը նիստի որոշումով ձիաքարշը քաղաքային տնտեսութեամբ վարելու սկզբունքը վերջնականապէս թողեց, այժմ մնում էր ձիաքարշը դալ կոնցեսիոներին որքան հնարաւոր է ձեռնտու պայմաններով։ Նոյն նիստին Դուման ընտրեց յատուկ մասնաժողով, որը քաղ. վարչութեան հետ միասին պէտք է մշակէր և նոր պայմանագիր կապէր Բոբիի հետ։ Վարչութիւնը և մասնաժողովը շատ կարճ միջոցում (մի շաբաթում) աւարտելով այդ գործը և երկու կողմերը համաձայնութիւն և ստորագրութիւն կայացնելուց յետոյ Հոկտեմբերի 30-ին վարչութիւնը ներկայացրեց պայմանագիրը ուր հարկն է ի հաստատութիւն։ Սակայն կառավարչապետը յետ դարձրեց պայմանագիրը պահանջելով, որ կէտ առ կէտ Դումայի քննութեան ենթարկուի։ Դուման Նոյեմբերի 9-ի և յաջորդ մի քանի նիստերին զբաղուեց պայմանների քննութեամբ և շատ աննշան փոփոխութիւններ անելուց յետոյ յանձնեց վարչութեան, որը Բոբիի համաձայնութիւնը և ստորագրութիւնը ստանալուց յետոյ, Նոյեմբերի 25-ին պայմանագիրը վերջնական ձևով կրկին ներկայացրեց Թիֆլ. պ. Նահանգապետի միջոցով երկրիս կառավարչապետին ի հաստատութիւն։

Սակայն ինչ է ներկայացնում վերջնական ձևով ընդունուած այդ պայմանագիրը։ Շատ և շատ կողմերով ստոր և անձեռնտու մի բան, համեմատութեամբ Ֆր. Բելգ. ընկերութեան առաջարկած պայմանների հետ, որի մասին Մուրճի անցեալ յօդուածում լիշատակութիւն էինք արել։ Եթէ համեմատական, աչքի ընկնող մի քանի թւանշաններ առաջ բերենք այստեղ, ընթերցողը կը համոզուի, որ լիրաւի քաղաքի համար շատ աւելի ձեռնտու կը լինէր Ֆր. Բելգ. ընկերութեան կոնցեսիայի դալ, քան Անոնիմ ընկերութեան։

---

[1] Դրեթէ բառ. առ թարգմանութիւն կառավարչապետի գրութիւնից։

Այսպէս օրինակ, ճանաչուր Լեանդոլովի հաշիւներով, ինչպէս անցեալ անգամ էլ ցուցինք, ընդունելով կոնցեսիայի ամենաերկար միջոցը 37 տարի, այդքան տարիների ընթացքում ստացած մօտաւորապէս 13.200.000 ռուբլի զուտ արդիւնքից

Բոբին իրան վերցնում է	9.300.000	այսինքն Պերին քաղաքին տալիս է Բոբիից աւելի քան 3.900.000 ռուբլի և իրան վերցրածից աւելի է տալիս քաղաքին 2.700.000 ռուբլի,
քաղաքին տալիս է	4.000.000 ռ.	
Պերին իրան վերցնում է	5.200.000 »	
քաղաքին տալիս է	7.900.000 »	

Իսկ ձիաքարշը գնելու պայմանների վերաբերեալ Ֆր. Բելգիական ընկերութեան առաջարկը նոյնպէս աւելի ձեռնտու էր. այսպէս մինչև կոնցեսիայի (կապալի) ժամանակի լրանալը քաղաքը ձիաքարշը գնելու համար պէտք է վճարէր՝

1. Ֆր. Բելգ ընկերութեան	4.783.700 ռ.	այսինքն քաղաքը Անոնիմ ընկերութեան 1.035.300 ռ. աւելի էր վճարում քան Ֆրանկո-Բելգիական ընկերութեան,
2. Անոնիմ ընկերութեան	5 819.000 »	

Անոնիմ ընկերութեան նոր պայմանագրի մէջ գնելու վերաբերեալ պայմանները գրեթէ անփոփոխ մնացին. ցիշենք մի կարևորագոյն կէտ նոյնպէս որ, Ֆր. Բելգ. ընկերութեան առաջարկով քաղաքին իրաւունք էր տրուում պայմանագիրը ստորագրելուց տասը տարի յետոյ գնել ձիաքարշը, այն ինչ Անոնիմ ընկերութեան նոր պայմանագրով քաղաքը այդ իրաւունքը ստանում էր 15 տարուց յետոյ միայն։

Նոր պայմանագրով քաղաքի օգուտն

Անոնիմ ընկերութիւնը վճարում է։ Ֆրանկո—Բելգ. ընկերութիւնը վճարումէր

1	տարին	15.000	ռ.		15.000
2	»	30.000	»		40.000
3	»	30.000	»		40.000
1	հնգամեակին	37.500	»	տարեկան	50.000
2	»	45.000	»	»	50.000
3	»	52.500	»	»	60.000
4	»	60.000	»	»	65.000
5	»	67.500	»	»	75.000
	վերջին 2 տարիները	150.000	»	»	160.000

Ուրեմն 30 տարիների ընթացքում Ֆր. Բելգ. ընկերութիւնը քաղաքին կը վճարէր 1.755.000

Բոբին նոր պայմանագրով պէտք է վճարէ 1.537.500

տարբերութիւն՝ 217.500

Այս մի քանի այլի ընկնող թուանշանները արդէն բաւականաչափ ապացուցանում են թէ որքան անձեռնտու էր Բոբիի ճանկը գցել դարձեալ տասնեակ տարիներ քաղաքիս ձիաքարշը, որի պատճառով չէ թէ

դանեակ հազարներ, այլ հարիւր հազարներ էր կորցնում քաղաքը, գլխաւորապէս նրա վարիչների, դէպի խնդիրը անտակտ և անհեռատես վերաբերուելու պատճառով։ Ասացէք, խնդրեմ, եթէ անհնարաւորութիւն էր ձիաքարշը քաղաքի ձեռքն առնելը (անհնարաւոր չէր լինի, եթէ սկզբից գլխաւորապէս քաղաքային վարչութիւնը լրջութեամբ վերաբերուէր դէպի խնդիրը և չարտայայտէր տատանումն, անորոշութիւն, մտավախութիւն և մանաւանդ տրամադրութիւն կոնցեսիայով տալու ձիաքարշը) ինչն էր արգելում քաղաքին մերժել մի այլ կոնցեսիօների (օրինակ Ֆր. Բելգ. ընկ.) աւելի ձեռնտու առաջարկութիւնը։ Միացեալ ժողովը նոր պայմանագիր խմբագրելիս Բոբիի հետ, չաշխատեց գոնէ Ֆրանս. Բելգ. ընկերութեան առաջարկութեան օգտաւէտութեան աստիճանը հիմք ընդունել. ոչ էլ Դուման ուզեց այդ անել [1]։ Դուման հնարք չգտաւ այնպիսի դրութեան մէջ դնել այդ ընկերութեան, որ նա խոնարհէր քաղաքի արդար պահանջների առաջ. այն ինչ Բոբին հնար էր գտնում գլուխ հանել և յաջողեց վերջապէս իւր ուզածն անել։

Նոյեմբերի վերջին, ինչպէս լիշեցի, պայմանագիրը ներկայացրած է երկրիս կառավարչապետին, որի կարգադրութեան համաձայն, ինչպէս յայտնի եղաւ դեկտ. 30-ի քաղաքային խորհրդարանի նիստին վարչութեան զեկուցումից, Դումայի որոշումը Անոնիմ ընկերութեան հետ կապած պայմանագրի վերաբերմամբ, կանգ է առել անորոշ ժամանակով։ Յայտնի չէ թէ ինչպէս է լուծուելու ձիաքարշի խնդիրը և թէ ինչպէս կը վերաբերուի կառավարութիւնը։ Եթէ կառավարութեան կողմից անձեռնտու ճանաչուի և պայմանագիրը չհաստատուի, այն ժամանակ քաղաքային Դուման լաւ կ'անէր, եթէ նոր մրցողներ առաջ կոչէր. իսկ եթէ այդ անհնարին կը լինի, այդ դէպքում պէտք է աշխատել, Անոնիմ ընկերութեան հետ դաշն կապելիս, ընդունել տալ նրան այն պայմանները, ինչ որ առաջարկում էր Ֆրանկո-Բելգիական ընկերութիւնը։ Ահա ներկայ հանգամանքներում միակ բարեյաջող ելքը, որ կարող է տանալ ձիաքարշի խնդիրը։

---

[1]) Պէտք է սակայն արդարը խոստովանել. Դումայի օպոզիցիային պարկանող իրաւասուներից մի քանիսը ցոյց տուին ձիաքարշի խնդրում, որ կանգնած են իրանց կոչման բարձրութեան վրայ. Ալիխանով և այլք ղեկավարում էին այդ խնդրում այլ և այլ հաշիւներով։